## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10

վիճակագրության պետական խորհրդի նիստի

---

17. 08. 2012թ. ժ.11: 00

**Մասնակցում էին՝** Ս.Մնացականյան (Խորհրդի նախագահ), Գ.Անանյան, Յու.Պողոսյան, Ս.Դավթյան, Լ.Պետրոսյան (Խորհրդի անդամներ), Հ. Գրիգորյան (Խորհրդի քարտուղար):

**Հրավիրված էին՝** Մ.Սարգսյան (իրավաբանական բաժնի առաջատար մասնագետ), Ա.Սաֆյան (միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ), Ա.Դաշյան (վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի գլխավոր մասնագետ), Դ.Մարտիրոսովա (տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ), Ա. Ավագյան (գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ), Ա. Հարությունյան (առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժնի պետ), Ռ. Պետրոսյան (տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի պետ):

Օրակարգի նախագծում ՝ հինգ հարց.

1. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2010 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության անվանազերծված տվյալների բազան Բելոռուսական սեփականաշնորհման և մենեջմենթի ինստիտուտի հետազոտական կենտրոնի աշխատակից Գլեբ Շիմանովիչին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Դ. Մարտիրոսովա/*

2. «Անասնաբուծության դրության մասին» ՁԵՎ 24-ԳՏ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության, «Բերքահավաքի, կերերի կուտակման, աշնանացանի և ցրտահերկի բարձրացման ընթացքի մասին» ՁԵՎ 29-ԳՏ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևերն ու լրացման հրահանգները հաստատելու, «ՀՀ ՎՊԽ 2002թ. օգոստոսի 12-ի թիվ 151-Ն», և «ՀՀ ՎՊԽ 2003թ. նոյեմբերի 7-ի թիվ 48-Ն» որոշումները ուժը կորցրած ճանաչելու» ինչպես նաև «Հաշվետվություն գյուղատնտեսական տեխնիկայի առկայության և սարքինության վիճակի մասին» ՁԵՎ ԹԻՎ 6-ՄԵՔ պետական վիճակագրական հաշվետվության ձևի ու լրացման հրահանգի վերաբերյալ, «ՀՀ ՎՊԽ 2002թ. օգոստոսի 9-ի թիվ 125-Ն» և «Գյուղատնտեսական տեխնիկայի առկայության և սարքինության վիճակի մասին» ՁԵՎ ԹԻՎ 6-ՄԵՔՀ պետական վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևի ու լրացման հրահանգի վերաբերյալ, «ՀՀ ՎՊԽ 2008թ. դեկտեմբերի 24-ի թիվ 18-Ն» որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ա.Ավագյան/*

3. ««Ռեստորանների ծառայությունների մասին» Ձև 1-ռեստորան վիճակագրական միանվագ հետազոտության հարցաթերթը հաստատելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ա.Հարությունյան/*

4. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

4.1. Հաղորդում՝ Ճապոնիայի Չիբա և Տոկիո քաղաքներում 2012 թվականի մայիսի 16-ից հուլիսի 21-ը ՄԱԿ-ի Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի վիճակագրական ինստիտուտի (UN SIAP) կողմից կազմակերպված «Վիճակագրական տեղեկատվության ստացման նոր տեղեկատվական և տեխնոլոգիական մեթոդներ» խորագրով դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Ռ. Պետրոսյան/*

4.2. Հաղորդում՝ Ավստրիայի Վիեննա քաղաքում 2012 թվականի հուլիսի 22-ից օգոստոսի 2-ը Համաշխարհային Բանկի կողմից կազմակերպված «Տնային տնտեսությունների կենսամակարդակի բազմանպատակային հետազոտության անցկացում» խորագրով ուսուցողական սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Դ. Մարտիրոսովա/*

5. Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Քվեարկության արդյունքները-կողմ՝5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

**Լսեցին՝**

«Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2010 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության անվանազերծված տվյալների բազան Բելոռուսական սեփականաշնորհման և մենեջմենթի ինստիտուտի հետազոտական կենտրոնի աշխատակից Գլեբ Շիմանովիչին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Դ. Մարտիրոսովա/*

**Որոշեցին՝**

թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ Բելոռուսական սեփականաշնորհման և մենեջմենթի ինստիտուտի հետազոտական կենտրոնի աշխատակից Գլեբ Շիմանովիչին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2010 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**Լսեցին՝**

**2.** «Անասնաբուծության դրության մասին» ՁԵՎ 24-ԳՏ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության, «Բերքահավաքի, կերերի կուտակման, աշնանացանի և ցրտահերկի բարձրացման ընթացքի մասին» ՁԵՎ 29-ԳՏ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևերն ու լրացման հրահանգները հաստատելու, «ՀՀ ՎՊԽ 2002թ. օգոստոսի 12-ի թիվ 151-Ն», և «ՀՀ ՎՊԽ 2003թ. նոյեմբերի 7-ի թիվ 48-Ն» որոշումները ուժը կորցրած ճանաչելու» ինչպես նաև «Հաշվետվություն գյուղատնտեսական տեխնիկայի առկայության և սարքինության վիճակի մասին» ՁԵՎ ԹԻՎ 6-ՄԵՔ պետական վիճակագրական հաշվետվության ձևի ու լրացման հրահանգի վերաբերյալ, «ՀՀ ՎՊԽ 2002թ. օգոստոսի 9-ի թիվ 125-Ն» և «Գյուղատնտեսական տեխնիկայի առկայության և սարքինության վիճակի մասին» ՁԵՎ ԹԻՎ 6-ՄԵՔՀ պետական վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևի ու լրացման հրահանգի վերաբերյալ, «ՀՀ ՎՊԽ 2008թ. դեկտեմբերի 24-ի թիվ 18-Ն» որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ա.Ավագյան/*

**Որոշեցին՝**

հաստատել «Անասնաբուծության դրության մասին» ՁԵՎ 24-ԳՏ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության, «Բերքահավաքի, կերերի կուտակման, աշնանացանի և ցրտահերկի բարձրացման ընթացքի մասին» ՁԵՎ 29-ԳՏ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևերն ու լրացման հրահանգները և ուժը կորցրած ճանաչել «ՀՀ ՎՊԽ 2002թ. օգոստոսի 12-ի թիվ 151-Ն», «ՀՀ ՎՊԽ 2003թ. նոյեմբերի 7-ի թիվ 48-Ն», «Հաշվետվություն գյուղատնտեսական տեխնիկայի առկայության և սարքինության վիճակի մասին» ՁԵՎ ԹԻՎ 6-ՄԵՔ պետական վիճակագրական հաշվետվության ձևի ու լրացման հրահանգի վերաբերյալ, «ՀՀ ՎՊԽ 2002թ. օգոստոսի 9-ի թիվ 125-Ն» և «Գյուղատնտեսական տեխնիկայի առկայության և սարքինության վիճակի մասին» ՁԵՎ ԹԻՎ 6-ՄԵՔՀ պետական վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևի ու լրացման հրահանգի վերաբերյալ, «ՀՀ ՎՊԽ 2008թ. դեկտեմբերի 24-ի թիվ 18-Ն» որոշումները:

*/Նորմատիվ/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**Լսեցին՝**

**3.** ««Ռեստորանների ծառայությունների մասին» ՁՆ 1-ռեստորան վիճակագրական միանվագ հետազոտության հարցաթերթը հաստատելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ա.Հարությունյան/*

**Որոշեցին՝**

հաստատել «Ռեստորանների ծառայությունների մասին» ՁՆ 1-ռեստորան միանվագ հետազոտության հարցաթերթը՝ համաձայն հավելվածի:

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**Լսեցին՝**

**4.** Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

4.1. Հաղորդում՝ Ճապոնիայի Չիբա և Տոկիո քաղաքներում 2012 թվականի մայիսի 16-ից հուլիսի 21-ը ՄԱԿ-ի Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի վիճակագրական ինստիտուտի (UN SIAP) կողմից կազմակերպված «Վիճակագրական տեղեկատվության ստացման նոր տեղեկատվական և տեխնոլոգիական մեթոդներ» խորագրով դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Ռ. Պետրոսյան/*

4.2. Հաղորդում՝ Ավստրիայի Վիեննա քաղաքում 2012 թվականի հուլիսի 22-ից օգոստոսի 2-ը Համաշխարհային Բանկի կողմից կազմակերպված «Տնային տնտեսությունների կենսամակարդակի բազմանպատակային հետազոտության անցկացում» խորագրով ուսուցողական սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Դ. Մարտիրոսովա/*

**Որոշեցին՝**

արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ